

ՄԷՋԱՄՈՒԱԿԱԿԱՆ ՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA - I - AHBAR
Grand'Rue de Péra 65

Համբարստ ի/ի սեկտ համի ՉԱՐՇԵՆՊԻՀ ՎԵ ՃՈՒՄԱ ԻՐԹԵՍԻ
կիւնիտի/ի նեշր օշունիւր:

مجموعة اخبار
بكاوغای تقسیم جادیمی نو سر ٦٥

ՂԱԶԵԹԱՐԸ ԱՊՐԵՆ ԳԻՅԱԹԱՐԸ. = Իսթանպուլ իշխն սեկտի/ի 60 շրուշ, = 6 այլըր 35. = Թաշրա իշխն սեկտի/ի 85. = 6 այլըր 45 ղշ. տուր: = Բաթթա իւճրէթի պիղէ սոխա տիր: = 15 կիւնիւր 60 բարա տիր: = ԻԼԱՆԱԹ ՇԱՐՇԵՆՊԻՀ. = 1ինճի սահիֆէնին պէճէր սրբասր 3, 2ինճի վէ 3ինճի սահիֆէնին պէճէր սրբասր 3, վէ 4ինճի սահիֆէնին պէճէր սրբասր 1 ղրուշ տուր: = Զօգ տէֆա տէրճ իսիլէճէր իշխն այլըրսա իսիլըրդ օշունիւր: = Երեսնի/ի 30 բր. տիր: Ղազէթանա միւթէլլիկ խաւաւաթ իշխն ՅՈՒԼԱՆԵՆԻՍ ԹՕԼԱՅԵԱՆԱ միւրաճաւաթ օշունիւր: = Իսթանպուլի Պէյոզլուսաա ճատտէի քէպիւտէ և. 65:

ՀՐԱՅԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐՈՅ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ժամանակին ծանուցած էինք Հասարակութեան մէջ Հրահանգութեան Խորհրդոյ մը (իմա՝ Ուսումնական Խորհուրդ) կազմակերպուելը: Վերջերս այս Խորհուրդը Կ-Պոլսոյ մէջ գտնուող Հայ-Կաթողիկէ դպրոցներուն մէջ մասին մանրամասն Տեղեկագիրը պատրաստեր է, տեղեկագիր մը որ անկողնակալութիւն կը բուրէ: Հրահանգութեան Խորհուրդին այս գեղեցիկ տեղեկագիրը՝ Խորհուրդին անդամներուն գործունէութեան ու եռանդին յայտնի ապացոյցն է:

Ինչպէս կը տեսնուի, քննիչ Խորհուրդը շատ գոհ է մնացած իր այցելութիւններէն: Եւրոպայի Խորհուրդը ընդհանուր ծրագիր մը կը պահի, ինչ որ շատ զգալի արդեօք մըն է: Իսկ արուած դասերը սովորաբար հայերէն, տաճկերէն և ֆրանսերէն լեզուներ, տոնմային ու ընդհանուր պատմութիւն, թուարկութիւն, աշխարհագրութիւն և ուրիշ գիտելիքներ են: Որպէս Համադպեաց վարժարանին մէջ անդամներէն, դասակ եւալն դասեր կը տրուին: Գաւառներն ալ տեղ տեղ կը գործածուին առիթոյն լաւագունին, որով կարելի է աւելի մեծ բաներ յուսալ: Իրը չէ՞ք՝ ամէնէն իսկոյն Ս. Յովնան Ուկերերան թաղային դպրոցն է որ չի գիտցուի ինչ պատճառաւ ժամանակաւ հանդուցեալ Կէօջեան Յակոբ էֆ. ի ծախքով չնուած իր սեփական տեղէն վերցուելով, եկեղեցւոյ մէջ նորանցքը՝ փոխադրուած է, որ լոյստրոյն անյարմար է իրը դպրոց գործածուելու: Այցելուած վարժարաններուն առողջապահական վիճակը միջակ է:

Ի բաց առեալ Համադպեացը, ուր միայն մէկ քանի աղքատ ձրիավարներ կան, Օրթաղի, Սամաթիոյ և Պէօլիք-տէրէի դպրոցները յաճախողներուն մէջ մէկ քանին միայն բարեկեցիկ են, իսկ Ուկերերան և Ս. Յակոբայ վարժարաններուն աշակերտներուն ամէնն ալ՝ աղքատ և ձրիավար:

Դիտելի է որ այս վարժարաններն Օրթաղիցիքը որ ամէն բաւական տարիներ առաջ փայլուն վիճակ մը ունեցած է, այսօր գիւղին մէջ աղքատութեան օր ըստ օրէ պակսելուն համար հազիւ 20 աշակերտ ունի, որոնց միայն 5ը Կաթողիկէ, մնացեալը Լուսաւորական է: Ս. Յակոբին 50 աշակերտ՝ ամբողջ Կաթողիկէ: Ուկերերանին 56 աշակերտ՝ որոնց 38 Կաթողիկէ, 18 Լուսաւորական: Համադպեացը 48 աշակերտ՝ որոնց 10 Կաթողիկէ, մնացեալ 38ը Լուսաւորական: Սամաթիոյ մէջ 20 աշակերտ՝ 5ը Կաթողիկէ, 15ը Լուսաւորական: Պէօլիք-տէրէին 12 աշակերտ, 5ը Կաթողիկէ, մնացեալը թուրք և յոյն:

Ինչպէս կ'երեւի Հայ-Կաթողիկէ վարժարանները յաճախող Հայ-Կաթողիկէ աշակերտներուն թիւը մեծ բան մը չի կազմեր. — ինչո՞ւ արդեօք:

Աշակերտներուն տրուած քրիստոնէական և բարոյական ուսմանց անկատար ըլլալը տեղեկագիրին մէջ արդար դիտողութեան առարկայ եղած է: Իրաւամբ այս կէտը լրագրին էջերուն մէջ ալ չատ անգամ գրուած և քննադատութեան պատճառ եղած ըլլալով, այս մասին պէտք եղած հոգածութիւնն սննդաբան է, քանի որ մարդու էական դաստիարակութիւնն ու կրթութիւնը՝ կրօնին ու բարոյականին գիտակցութիւնն է:

Վերջապէս Հրահանգութեան Խորհուրդը իր տեղեկագիրին մէջ մեր վարժարաններուն կարգ մը ցաւալի կողմերը մատնանիլ կ'ընէ, մանաւանդ որ ուսման իր կողմերը շատ հաղուադիւս են:

Յիշեալ Խորհուրդը կ'առաջարկէ Ս. Յակոբը և Ուկերերանը միացնել. հանդուցեալ Ազարեան Կ-Պատրիարքի օրով ալ այս ծրագիրը կար, բայց ինչ ինչ պատճառներով՝ որոնք աւելի անձնական ներշնչման արդիւնք էին, քան թէ յօգուտ ազգային մանկտուին, այդ ծրագիրը մինչև այսօր չէ՝ գործադրուած:

Այս տեղեկագրէն այնպէս կ'երեւի թէ քիչ չաւ չէ՞ք, չէ՞ք չէ՞ք վարժարանները Օրթաղիքէն և Համադպեաց վարժարաններն են:

Հրահանգութեան Խորհուրդը Կ-Պոլսոյ Հայ-Կաթողիկէ վարժարանները երեք մասի բաժնած է հետեւեալ կերպով.

- Ա. Ազգային Թագական վարժարանք.
1. Պէօլիք-տէրէ, 2. Օրթաղէ, 3. Ս. Յակոբ, 4. Ուկերերան, 5. Համադպեաց, 6. Ալաթաթաթաթ (Բանկալի) (*), 7. Սամաթիա:

- Բ. Միթիմարեան Հարց վարժարանք.
1. Բանկալի, 2. Սազըղ-աղաճ, 3. Գաւառիք:

- Գ. Ս. Գ. Լուսաւորիչ Ուսումնարան, ի Բերա:

- Դ. Ան. Յղութեան Կարգէն վարժարանք.

1. Բերա, 2. Սամաթիա, 3. Գաւառիք, 4. Պէօլիք-տէրէ:

Քննիչ Խորհուրդը Բ., Գ. և Դ. դըլուսներու յատուկ վարժարանները չէ այցելած, բայց իր տեղեկագրին մէջ կը հարցնէ Ազգ. վարժութեան թէ ինչեւ վարժարաններուն ո՞ր մէկուն և ինչ սահմանի մէջ իրաւունք պիտի ունենայ միջամտելու. նոյնպէս կը խնդրէ որ ի պարագային Հրահանգութեան Խորհուրդին սոյն իրաւունց վրայ մասնաւոր չըջարկականով Ամեն. Կ-Պատրիարքն հաճի ծանօթութիւն տալ իւրաքանչիւր վարժարանի Տնօրէնութեան:

Ըստ մեզ ալ, Կ-Պոլսոյ մէջ գտնուող բոլոր Հայ-Կաթողիկէ վարժարանները քանի

(*) Ազգատաթաթ վարժարանին իրաւականութեան կողմէ ցոյց տրուած աւարկութիւններուն վրայ, ազգ վարժարանը չէ այցելուած. քննիչ Խորհուրդը իր տեղեկագրին մէջ այս մասին դիտողութիւն կ'ընէ, և Ամեն. Կ-Պատրիարքին ուղարկութիւնը կը հրաւիրէ:

որ Ամեն. Կ-Պատրիարքին ուղարկելու անուղղակի իշխանութեան կամ հակողութեան ենթակայ են, պէտք չէ՞ որ երբեմն ազգային պաշտօնական մասին մը կողմէ քննական այցելութիւններու ենթարկուին. ազգին տուր օգուտն ալ միթէ այս չի պահանջեր:

Հրահանգութեան Խորհուրդը կ'առաջարկէ նոր նոր եկամուտներ հայթայթել այն դպրոցներուն, որոնց պիտեմն անձուկ վիճակի մէջ կը գտնուի: Այս և ասոր նման վարժարաններուն մատակարարութիւնը դիւրացնող ուրիշ քանի մը օգուտ կար առաջարկութիւնները Կ-Պատրիարքին ուղարկութեանը կը յանձնէ:

Վերջապէս այս տեղեկագիրը, որ իր տեսակին մէջ գլուխ-գործոց մը կրնայ համարուի և որ Ամեն. Հոգեւոր Տնօրէն Պատ. Վարչական Ժողովոյ կողմէ շատ գնահատուած է, Հրահանգութեան Խորհուրդին անդամներուն ստորագրութիւնները կը կրէ. ասոնք անձնաւորաբար և միայն յօգուտ ազգային մանկտուին այս քննական այցելութիւնը կատարած են. այս անգամ ներքին և Գեր. Գեղարք. Վ. Թէրզիպաշեան, Չարեհ էֆ. Շիշմանեան և Տօգթէօր Թովմէի էֆ. Ոսկեան:

Կը մնայ հիմա միշտ հարցում մը, եթէ ներքին:

Այս տեղեկագիրը ինչքա՞ պիտի ծառայէ: Մեր վարժարաններուն պակասութիւնները, թերութիւնները մասնաւոր ընելու: Ծառ լաւ, շատ աղւոր նպատակ մը:

Բայց ինչ պիտի ըլլայ արդիւնքը, եթէ մէկը չմտածէ անոր ցոլացած թերութիւնները նկատողութեան առնել և պէտք եղածը կարգադրել:

Ե. Թ.

ՄԵՆԱՍՏԱՆԻ ԿՈՅՍԸ

Ամիսներ առաջ՝ սոյն վերագրին տակ հրապարակութիւններ, չենք գիտեր ինչ առթիւ, հասարակաց ընթերցման ընթացիկներ օրագրերու մէջ, Գրիգորեան Կաթողիկէութեան մը հանդէպ՝ փոխանակ ընթերցողաց հիացումն շահագրգռելու, անոնց ծաղն ու ծիծաղն շարժելու գիտնամբ: Նոր չէին մեզ համար այդ գրուածոց մէջ յայտնուած կուսամբար գաղափարներն, որովհետեւ ուսկից փոխանուած ըլլալին գիտէինք, և տարիներ առաջ հնչեցուցած էր զանոնք ազգային բանաստեղծ քնարի մը տեղեւոր թռիչքացումն ալ, որ յայտնապէս հակակրօն զգացման մը արձագանքը կրնար համարուի: Ի՞նչ՝ առաջինները և թէ՛ վերջինս՝ առեւնին՝ իրենց կորովի և յարմար եղծն ու հերքումն ունեցան. մեր դիտաւորութիւնը չէ հետեւաբար ուրիշներուն ըսածը կրկնել, այլ գործ-

նականապէս ցոլցնել թէ հակառակ այդ նախապաշարմանց՝ ի՞նչ և ո՞րչափ ազդեցիկ ու օգտակար դեր մը ունի «Մենաստանի Կոյսը» կամ Կոյսը ընդհանրապէս՝ մարդկային հասարակութեան մէջ թէ կրօնական թէ ընկերական տեսակէտով:

Մանկութեան դաստիարակութիւնը՝ մանաւանդ փափուկ սեռինը, որուն սիրտն ու միտքն ամենամեծ գիւրազգածութեան ենթակայ են, և որուն կրթութեան կախում ունի գլխաւորապէս ապագայ սերնդեան մը բարոյական վիճակն, այս դաստիարակութիւնը, կ'ըսեմ, յայտնի է որ կրօնական ու ընկերական կացութեան առանցքը կրնայ սեպուիլ, որովհետեւ ո՞ր կողմը միտած ըլլայ սա, այն կողմը պիտի յարի մանկութեան կազմակերպ հասարակութիւնն ալ Ուստի անոնք որ այս ծանր ու ճակատագրական գործոյն մէջ կարեւոր դերն ունին և ունեցեր են արդիւնաւոր եղանակաւ, յայտնի է որ մարդկային հասարակութեան ու անոր վարչապետն հակառակ ըլլալէ հեռու, անոր բարեկէտն վաստակաւորներն են: Հետեւաբար, աշխարհօրէն ալ Կոյսը չեն կամաւոր անձնասպաններ, որ ուրիշին օգուտ մը չունենալով կրօնի անթափանց սկզբանց գիրքը նետած ըլլան զիրենք, հապա կամաւոր անձնասպաններ են ի սէր կրօնի ու մարդկութեան, որ փախուստ տուած են աշխարհային սին ու պատիւ հաճոյց, պահելով իրենց կենաց անշարժ և կուսական ըլլալը՝ վաւերու համար մարդկութեան ամենափափուկ տարրին մէջ բարոյական կենաց պատրոյկն ողջ ու վառ դաստիարակութեամբ մը:

Յայտնի է թէ դաստիարակութիւնը ըստաճը՝ ծնողագործը գործ մըն է, որ կատարելապէս գլուխ կրնայ հանուիլ միայն այնպիսի սիրով, որ հոս հոն կապուած չըլլալով՝ կարենայ դաստիարակելուց վրայ հանգչել և կեդրոնանալ. այդ սէրն միայն կոյս սրտի մը մէջ կրնայ ծնիլ, քանի որ սա անխառն է և չէ բաժնած իր այդ զգացումն աշխարհի կամ օգնական ընկերի մը հետ, և չունի զաւակներ, որ կանխեն այդ սէրը՝ նուազեցնելով անոր ջերմն ու եռանդն: Այս ըսածներուն գործնական ապացոյցն տալու համար պէտք չունիմ մտաց հանցումն քննադատելու զէպ ի օտար երկիրներ. բաւական կրնայ ըլլալ մեր երկրին Կաթողիկէ-Հայ հասարակութեան վրայ անխառն մը նետել, անոր մէջ տեսնելու համար՝ իգական սեռի դաստիարակութեան յառաջա-

ԳԼՁԵ. — Յիլատեղիի անտառ պիր բախ-
լոնը վուգու պուլարագ, 4 խանե խա-
րապ օլմուշ տուր: Պու գաղասա 12 թէ-
լէֆախ վէ 40 մէճրուն վուգու պուլմուշ
տուր:

